

լոր մարդարիտներով: Եկեղեցին դարդարուած էր քանի մը խոշոր նկարներով, գետինը ծածկուած երկրին գորգերով: Պատերուն երկայնքին զետեղուած էին նստարաններ մեր աւելի յարմար նստելուն համար: Անոնք ունէին նաեւ տեսակ մը անպիտան երաժշտութիւն: Մեր աղօթքը կատարելէ վերջ, ձի հեծանք երթալու համար այն վայրը, ուր մեզի համար ընդունելութիւն սարքուած էր: Սարժրազ պէկ, շատ յարգանօք զեսպանները ընդունելէ եւ հետեւորդներուն գլխաւորներուն հետ քաղաքաւարութիւններ փոխանակելէ վերջ, դանոնք տաաջնորդեց, ընդարձակ կամարակապ ճեմելիքէն մեծ պարտէզ մը, որուն ետեւը մենք գտանք րացօթեայ սրահ մը, ըստ երկրին սովորութեան, ուր մենք հրաւիրուեցանք զեանին վրայ նստիլ: Սփողոցը, որ ոսկի եւ արծաթ թելով զիպակ մըն էր, ծածկուած էր ամէն տեսակ պտուղներով եւ պահածոներով: Մենք խմեցինք խմելիք մը, պատրաստուած ջուրէ, շատ նման վարդաջուրի, սակայն անհունս աւելի նրբաբիմբ, եւ աւելի թանկագին: Պտուղները տարուելէ վերջ, սփռեցին Հընդկական բամպակեայ լաթ մը, եւ մտեղէնը յառաջ բերուեցաւ արծաթ ամաններու մէջ: Հրաշալի կերպով լաւ պատրաստուած էր, ըստ Պարսկական ճաշակի, այն տարբերութեամբ, որ այս խնճոյքին բերուած էր խոզնի եւ ուրիշ տեսակ մտեղէն, որոնց համար Պարսիկները խորչանք ունին: Մենք հազիւ թէ կերած էինք այնքան, որ մեր առաջին անօթութիւնը յազեցուցած էինք, երբ ստիպուեցանք սեղանէն ելլել, առաջնորդուելու համար փարթամ յարկարամնին մէջէն, զէպի ուրիշ սրահ մը, որ պարտէզին վրայ կը նայէր: Հոն պատերուն վրայ կային ինչ որ նկարներ, աշխարհի ազգերու մեծ մասին կիները ներկայացնող, հազներու իրենց յատուկ երկրին ճաշակով: Գետինը ծածկուած էր ճոխ գորգով, որուն վրայ զետեղուած էին ծաղկազարդ սաքէնի րացմոցներ, որոնց յատակը ոսկի եւ արծաթ հիւստալ էր: Սրահին մէջտեղը կար շատրուան մը, որուն աւազանը սպիտակ մարմարեայ էր, ջուրը ծածկուած էր ծաղիկներով, եւ չորս բոլորը շուրջանակի գինի՝ շիշերով եւ բարձրով զետեղուած:

«Մենք հրաւիրուեցանք նստիլ եւ ճաշակել պտուղներէն եւ պահածոներէն, որոնք ներս բերուեցան: Ատոր ընթացքին մենք զուարճացանք երաժշտութեամբ եւ պարով: Եւ աւելի եւս մեզ պատուելու համար, Պատրիարքին ետեւէ մարդ զրկուեցաւ, որ անմիջապէս եկաւ, իր վրան կրելով ջրեայ մանիշակագոյն գոյնով կերպաս վերարկու մը, ուղեկցութեամբ երկու սեւ հագած քահանաներու, իրենց գլխուն վըրայ րակեղներով: Ան վատ ընկերակից չէր, սակայն եղբայրներէն երկրորդը, որուն անունը էլիսաս Պէկ էր, խումբին մէջ ամենէն շատ լաւ զուարճաւորն էր: Ան, զեսպաններուն ընդունելութիւնը աւելի փայլուն ընելու համար, քամբարայիմ վրայ նուագեց, որ պարսիկներէն գործածուած կիթառի նման գործիք մըն է, յետոյ բերել տուաւ եօթը ճենապակեայ դաւաթներ, ջուրով լեցուն եւ անոնց զարնելով փոքրիկ երկու ձողիկներով՝ զանոնք համաձայն ըրաւ քամբարայիմ հետ: Մինչ մենք կ'ունկնդրէինք այս նուագին, Սարժրազ Պէկ մեզի ըսաւ, թէ ան մեզի պիտի տայ տեսակ մը նուագ, որ պէտք է միւսին չափ հեշտալուր ըլլայ: Ատոր վրայ ոտքի ելլելով, հրամայեց երկու մանկաւիկներու իրեն բերել երկու մեծ փայտեայ ամաններ, եւ քանի մը բիւրեղեայ րաժակներ, որոնք խումբին մէջ րաժանց, որ մով սկսաւ յանուն Պարսից թագաւորին կենացը: Ամբողջ օրը այս զուարճութիւններով անցաւ, մինչեւ որ զեսպանները, տեսնելով որ զիշերը վրայ կուգայ, հրաժեշտ առին իրենց հիւրընկալներէն: Սակայն, ասոնք, մեզի տունէն դուրս առաջնորդել ձեւացնելով, մեզի բերին պարտէզին հանդիպակաց կողմը, ուր մենք սփողոցը սփռեալ գտանք, ծածկուած ամէն տեսակ մտեղէններէ, ձկնեղէն, խմորեղէններէ, պտուղներէ եւ պահածոներէ, խնճոյքին համար: Մենք դարձեալ նստանք, առ ի հաճոյակատարութիւն, որովհետեւ անկարելի էր երեւակայել, որ մենք կրնայինք դարձեալ ուտել: Եւ ոչ ալ կը հաւատամ, թէ ան, որուն կողմէն հիւրընկալուած էինք, իր շքեղութիւնը, ազնուութիւնը եւ առատաձեռնութիւնը ցոյց տալէ տարբեր նպատակ ունէր: Սրահը լեցուն էր ճրագներով, որոնք առատապաղին ամբարցուած էին կապերով: Անոնցմէ այնքա՞ն